

Թիւններն յարգելով՝ կ'ըսենք, թէպէտ  
և իրօք վննետկեցւոց վաճառականա-  
կան վերաբերութիւնն նախնարար Բիւ-  
զանդացւոց պետութեան՝ քան փոքուն  
Հայոց հետ եղած ըլլայ, բայց չենք տա-  
րակուսիր ըսել ընդ Հէրէնի թէ այն

վաճառականութիւնները այսպսակ ըլլար,  
սակայն այս յայտնի է թէ իաշակրաց  
ժամանակ եղաւ յորդահոսան գետ, և  
յետ այնորիկ ծաւալեց իւր արգասա-  
ւորութիւնն յԱսիա և յԵւրոպէ առհա-  
սարակ: Իսկ թէ ինչպէս, տեսնենք:

Կը շարունակուի

Հ. Բ. ՍԱՐԳՍԵԱՆ

### Վ.Ս.Ս Ն Վ.Ա.Ն ՈՐ Է Ի Յ

#### ՈՐ Ի ՍՈՒՐԲ ՔԱՂԱՔՆ ՅԵՐՈՒՍԱԿԷՄ

ՅԱզատանգեղեայ պատմութենէն որ էր դպրապետ սուրբ Լուսաւորչին Գրիգորի 4:

#### Տ Ե Ղ Ե Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Ժամանակիս գիտնական միանգամայն և կրօնախառն հետազոտութեանց՝ մէկ զիխաւորն ալ է  
Սուրբ տեղեաց աշխարհադրական ծանօթութիւնն, և իաշակրաց որ և է յիշատակարանաց յա-  
րևելքս, ասոր Համար, զատ յայոց, 'ի Քաղղիա կազմուեցաւ Ղնկերութիւնն Լատին արևելից, So-  
ciété de l'Orient latin, որոյ վրայօք արդէն նորերս ազգային լրագիրք ալ չափաւոր տեղեկութիւն  
տուին: Դոյն ընկերութեան զխաւոր գործող և գրող անձին խնդրանօք զրկած եմք իրեն փոռն-  
կերէն թարգմանութիւն հետևեալ կարևոր գրուածին, որ 'ի դարու վերջերը կամ Ղին սկիզբը շա-  
րագրուած է անուշտ Ալլաստաս Վարդապետէ Հայոց, որոյ վրայ ուրիշ մ'ալ անելցուցեր կամ  
ընդարձակեր է տեղեկութիւն. երրորդ մ'ալ զտնելով գնոյնս 'ի յիշեալ ձեռագրի Անկիւրիոյ վանան-  
գաղափարեր է: Մեր օրինակն ալ անկէ է. ուրիշ օրինակ մ'ալ ունինք 1624ին գրած յորում այդ  
յետին հատուածն չկայ: Փափազիք որ լաւագոյն օրինակը կամ ասոր նման գրուածք Երուսաղէմի  
տեղեաց վրայօք հաստարակուէին, որպիսիք անլի յուսայի են գտուիլ 'ի մնացեալ Վանորայս  
Հայոց Սուրբ Երկրին:

Ի ժամանակս թագաւորութեան Տըր-  
ղատայ և 'ի հայրապետութեան սրբոյն  
Գրիգորի Լուսաւորչին, մեծամեծ իշ-  
խանքն Հայոց, շինեցին վանորայք 'ի  
սուրբ քաղաքն Երուսաղէմ. որոց ա-  
նուանք վանորէիցն են այսօրիկ .

Պետրոսի վանքն, որ արտօքոյ քաղա-  
քին է, 'ի կողմանէ Սելւովանայ որ կոիի  
Հառաչումն Պետրոսի. ընչիւք և ծա-  
խիւք արքունի շինեալ եղև:

Պանդայ վանքն որ սուրբ կարապե-  
տին է, որ յարևելից կողմանէ 'ի Ձի-  
թենեաց լերինն կայ, նոյնպէս արքունի  
ծախիւք շինեալ յանուն սուրբ կաթու-  
ղիկէին որ 'ի Վաղարշապատ քաղաքի,  
զոր Ալուանք ունին մինչև ցայժմ:

Մըժայ վանքն, որ յանուն Սուրբ Քա-  
ռասնիցն, զոր այժմ՝ Տաճիկք ունին:

Մերձ 'ի նա Բատին վանքն Շիրա-  
կացւոց, զոր կնկղաւորաց վանք յետոյ  
անուանեցաւ:

Սուրբ Գէորգայ վանքն, 'ի նոյն կողմն  
է, զոր այժմ աներ է:

Նորավանք, մերձ 'ի դերեզման Եսա-  
յեայ մարգարէին, 'ի նոյն կողմն Ձիթե-  
նեաց լերինն, զոր այժմ քակեալ են  
Տաճիկք:

Խաղայ երանելոյ վանքն, որ է 'ի  
ձորն Յովսափատու մերձ 'ի Գեթսե-  
մանի:

Սուրբ Պողոճոտոսի վանքն, շինեալ<sup>2</sup>  
Չորրորդապետն Հայոց 'ի հիւսիսայն կողմն:

1 Մեզք ծանօթ Ազատանգեղեայ պատմու-  
թեան մէջ այսպիսի յիշատակ չկայ:  
2 Եթէ Չորրորդ Հայոց (Մոփաց) նախարարն

չէ՝ մեզք անծանօթ է այսպիսի իշխանութիւն մը  
'ի Հայաս:

Ածրունեաց վանքն, որ յանուն սուրբ Գէորգայ:

Զարեհուանի վանքն արտաբոյ քաղաքին:

Մամիկոնեանց վանքն որ յանուն Սուրբ կարապետին:

Գուգարաց վանքն:

Բղնխի վանքն շինեալ 'ի նոյն կողմն, որ կոչի Ս. Սարգսի և Բագոսի:

Սիւնեաց վանքն որ յանուն սուրբ Գէորգայ, զոր Տաճիկք քակեցին:

Ըոպշտունեաց վանքն որ ուրկանոց էր Հայոց վանորէիցն, նոյն կողմն:

Խոռխոռունեաց վանքն 'ի նոյն կողմն: Երկղավանք, որ 'ի Դաւթի դրան է, որ յանուն սուրբ Աստուածածնի է:

Սուրբ Ղևոնդեանց վանքն:

Կրտի վանք, Զորրորդ Հայոց յարևելից կուսէ կայ:

Անձևացեաց վանքն որ յանուն սրբ. բոյն Անանեայ, որ է մերձ 'ի Բեղղեհէմ:

Եւ 'ի ներս 'ի քաղաքն Արշակունեաց վանքն 'ի սուրբ Պրոպատիկէ կողմանն:

Գազաունի վանքն որ յանուն սուրբ Հռիփսիմէի և Գայեանէ, 'ի մէջ քաղաքին՝ դրանն Յարութեան:

Կամարականաց վանքն՝ զոր Արշակունեաց կոչեն, որ յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին:

Ամատունեաց վանքն, սուրբ Սիոնի կողմն է:

Այլ վանք Ամատունեաց, որ հաւատաւորքն բնակէին 'ի կողմն Սիոնի:

Մամիկոնէից վանքն յանուն Սուրբ կարապետին 'ի նոյն կողմն:

Զորս վանք այլ 'ի Սելովմայ կողմն կայ:

Կարոնացոց վանքն, զոր Սմբատ Բագրատունեաց է շինեալ:

Սահառունեաց վանքն 'ի նոյն կողման է, զոր Բարու վանք կոչեն, որ է Տեառնեղբորն՝ զոր բնկալաւ վէմն:

Պարունեաց վանքն, որ է 'ի կողմն Գալիլեայ լեռին:

Այլ Անձևացեաց վանքն, կայ 'ի նոյն կողման:

1 Գուսէ Պաղակունեաց, անձանօթ աղաւտոսէ:

Զաղակունեաց վանքն 'ի նոյն կողման է, զոր այժմ Տաճիկք ունին<sup>1</sup>:

Սուրբ Բառասնից վանքն, 'ի նոյն կողմանն կայ:

Կոտայեցոց վանքն, 'ի կողմն Զիթեանեաց լեռին, յորում դիմն երանութիւն ուսոյց աշակերտացն:

Վարած(ու)նեաց վանքն, 'ի նոյն կողմն տաճարին Սողոմոնի:

Վանանդազեաց վանքն՝ 'ի նոյն կողմն: Զատեցացն՝ 'ի նոյն կողմն<sup>2</sup>:

Մոկաց վանքն 'ի կողմն Գեթսեմանի:

Քալբերունեաց վանքն 'ի կողմն Գալիլեայ լեռին:

Սահառունեաց վանքն 'ի նոյն կողմն է: Մազազեաց վանքն, որ այժմ Հոռոմն ունի:

Սուրբ Յոհաննու վանքն 'ի դրանն Յարութեան, որ այժմ Վրացիք ունին:

Կողայ վանքն 'ի նոյն կողմն, զոր այժմ Հոռոմն ունի:

Սպանդունեաց վանքն:

Աշամունեաց վանք՝ աւերած է:

Յարևելից կուսէ այլ վանք Հայոց: Դերջանայ վանք:

Սիւնեաց վանքն յարևելից կուսէ:

Այլ վանք Սիւնեաց 'ի նոյն կողմն:

Այլ վանք Սիւնեաց 'ի Զորն Սարայի:

Զորրորդ վանք Սիւնեաց, 'ի Զորն Յովսափաթու:

Հինգերորդ վանք Սիւնեաց զոր Տաճիկք ունին:

Բատրոյ վանքն որ յանուն սուրբ Աստուածածնի, որ առ աշտարակին Դաւթի է:

Կաղանդուաց վանքն 'ի նոյն կողման է: Սուրբ Դրիգոր Ամարասայ վանքն:

Արցախայ վանքն, 'ի հարաւակողմն:

Այլ երեք վանք Աղուանից զոր այժմ Տաճիկք ունին:

Այլ երեք վանք 'ի մէջ քաղաքին Երուսաղեմի:

Տաշրացոց վանք որ յանուն Սուրբ Գէորգայ, Արշակունեաց շինեալ: Եւ այլ չորս վանք մեծամեծք 'ի Մամիկոնէից շինեալ:

2 Անձանօթ է 'ի պատմութեան և այս սոհմ:

Ումենայն բովանդակ եօթանասուն վանք շինեալ եղև յիշխանաց Հայոց 'ի սուրբ քաղաքն յերուսաղէմ, 'ի տեղիս տնօրինականացն Քրիստոսի և յայլ աստուածակորս տեղիսն : Եւ զմեծամեծ եկեղեցիքն, զԳողգոթամ, զԿ'նուռն, ըզսուրբ Յակոբն, զՀրեշտակապետն, և զժրկիւն, զՎերնատունն, և զՀամբարձուսն, զՋառերն և զԻսաչ գիւտն, զԻտրանն Ղուսուորչին, և զաստուածընկալ Գերեզմանն . շինեալ եղև 'ի Թագաւորէն Տրդատայ և 'ի սրբոյն Գրիգոր Լուսուորչէ :

Եւ այս ամենայն վանորայքս յերուսաղէմ 'ի սուրբ Լուսուորչէն հաստատեցան . բայց յուրվա 'ի Ներսիսէ, զոր հրամայեաց շինել 'ի պատնառս ազօթից 'ի փրկութիւն Հայոց : Զոր հայրապետացն տեղոյն յետոյ 'ի Նախանձ շարժեալ խանգարեցին զամենայն կարգ վանորէիցն . վասն որոյ իշխանացն Հայոց եօթն կենդինարս տուեալ թագաւորին Յուստինիանոսի, որ լինի 70000 դահեկան, թափեցին յիշխանութենէ հայրապետացն զամենայն հայ վանորայսն, եթէ արանց վանք եթէ կանանց վանք, եթէ միանձանց խրճիթ, անդէն զինքեանս առնելով իշխեցողս : Ապա յետոյ անփոյթ արարեալ իշխանացն Հայոց և կաթողիկոսայն, որպէս և զայլ մեծամեծս 'ի պատուիրանացն անհոգառնեն, և վանականք որ յերուսաղէմ ծոյլ և հեղզ եղեն, նոցայն տապալեալ քանդեցան : Իսկ որք պիտանիք և ժիրք և աստուածաճանոյ վարուք՝ զիրեանցն պահեցին սահման հաւատոյ և վարուց, նոցայն դեռ ևս չէն են և հաստատուն : Եւ զյուրվ վանորէիցն մերոց՝ յորժամ առաջնորդք վախճանէին և ոչ լինէր որ հոգեբարձու՝ որ զայլ որ կարգէր առաջնորդ Հայոց, ապա աճապարէին պատրիարքունք Երուսաղեմի և Հռոմի : Եւ դարձեալ ելին ինքեանք Հայ վանականքն, 'ի ժանրութենէ հարկաց Տաճկացն ճողպրել կամելով, և զայլ իւրեանց վաներն որ ընդ ձեռամբ էր ընդ պարսպօք քաղաքին՝ կանանց վանքեր արարին և սարկաւազուհիս կարգև

ցին, զի անհարկ լիցին և ազատ, որպէս և զայլ կանանց վաներն : Եւ ինքեանք վանականքն արտաքոյ քաղաքին ելին յայլ տեղիս . և փոխեալ զանուանս՝ գաւառացն և ազատացն ազգացն աշուանեցին անուանս, թերևս 'ի նոցանէն գտցն ոգնութիւն և ողորմութիւն :

Արդ բազումք յեգիպտոս և յԱղեքսանդրիայ և 'ի Թեբայիդ և 'ի Լեւան Սինէական կային մենաստանք Հայոց, նա և 'ի սուրբ Լեւան Թաբօր, և 'ի յեզր ժովուն Տիրերայ և յայլ սահմանս Պարսիսիոյ . զոր յուրվա իմովին իսկ աչք տեսեալ, զամս բազումս կայի լինելով յաշխարհին յայնմիկ . և ամենայն աստուածաշունչ և հոգեպատում պատուիրանք անպակաս գոյր 'ի Հայկական լեզուս, յամենայն մենաստանս Երուսաղեմի և որ նովա շուրջ զերուսաղէմաւ :

Երանելոյն Անաստասայ Հայոց վարդապետի գրեալ զանուանս վանորէիցն Երուսաղեմի, 'ի ինզրոյ իշխանին Համազասպայ կամսարականի Պալհաուսիոյ, որ կամէր գնալ յերուսաղէմ, որ և գնաց իսկ և արժանացաւ աստուածակորս սուրբ տեղեացն, ընդ որս շրջեցա Տէրն Յիսուս Քրիստոս 'ի մարդանալն իւրում . և 'ի հայրապետացն Երուսաղեմի թափեաց զՀայոց վանորայսն, որք կամէին յեղափոխել զկարգս նոցա և զհաւատս ըստ Յոբնադիքարողութեան : Այլ և յետոյ բազում նեղութիւնս և տանջանս կրեցին Հարքն Հայոց և վանորայքն 'ի պատրիարդացն Հռոմոց և այլոց որ զկին նոցա նստան, սակս հաւանելոյ չորրորդ ժողովոյն Քաղկեդոնի և խոստովանութեան երկու բնութեց : Եւ միաբան ժողովեալ ամենայն Հարքն և առաջնորդք մենաստանացն և խրճրթաւոր միայնակեացքն անձինք իբրև հինգ հարիւր, զրեցին առ երանելի կաթողիկոսն Յոհան և առ այլ աթոռակայսն, եթէ զինչ պարտ իցէ առնել, հաւանել նոցա և ունել զտեղի բնակութեան իւրեանց, և թէ՛ թողու և ելանել անտի, զի հրաման թա

գաւորին խստանայր 'ի վերայ որոյ քաղաքին և հայրապետոցն, զի մի բնակեացեն անդր 'ի Հայոց կրօնաւորաց և Յակոբիկ Ասորի կամ յեզրիպտացւոցն . այլ միայն որք ողջ ունին զհաւատս թաւ գաւորին և զՅորնադի սահմանադրութիւնն : Եւ գրեաց կաթողիկոսն Հայոց, թէ վասն հաւատոյ մասին մի հնազանդիք գոցա, այլ թողէք և արտաքս գընացէք 'ի քաղաքէ այսի . և բազումք թողին զմենաստանս իւրեանց և զինչս, և 'ի բաց գնացին . և այլք բնակեցան 'ի Կեսարիա, և այլք չոգան յեզրիպտոս, և բազումք 'ի տեղովէ իւրեանց ոչ գնացին . այլ համբերեցին գանից և աւարառութեանց և նեղութեանց 'ի հայրապետացն Երուսաղեմի, մինչև տիրեցին Տաճիկք այխարհին Պաղեստինոյ և Երուսաղեմի . և այնուհետև ոչ համարձակեցան բռնադատել զորք հայրապետքն, զի քայքայեցան 'ի ձեռաց իսմայելացւոցն պատրիարքունքն և գերեցան, և հանգիստ առին Հայք և Ասորիք : Իսկ յետոյ 'ի ժանրութենէ հարկացն նեղացան և յաւերանացն երկրին Հայոց . զի ոչ բերէին զմուսոս գեղարեաց զոր պարգեհեալ էին թագաւորք

և իշխանք Հայոց . և նոցա ոչ կարացեալ համբերել թողին զտեղիս իւրեանց . և ժի վաճք միայն մնացին . և կէսք 'ի լերինն Չիթենեաց և այլք մերձ 'ի Բեթղեհէմ, և սիւնական կրօնաւորք, և 'ի յեզր սուրբ գետոյն Յորդանանու, և 'ի լերինն փորձութեան, յԱնապատ փրկչին, և 'ի թարթրական լեռն, և 'ի Հերմոն, հանդէպ Բարբորայ . և այլ ևս 'ի նոյն կողմանս Տիբերական ծովուն, յայնմ կողմանէ ուր գեօթն նկանակն ետ հինգ հարիւրոցն :

Եւ այսոցիկ այսպէս եղելոց :

Ի յերկիրն Հոռոմոց Գաղատիա, որ մականունն կոյի Անգուրիա, 'ի Լուսաւորչին Գրիգորի յանուն եկեղեցի՝ գըտաք զիւր, յորում գրեալ էր գրուատրս այս . որ Անաստաս անուամբ վարդապետ Հայոց գնացեալ էր յԵրուսաղէմ, և ականատես եղեալ վանորէիցն . և շէն ամենայն վանորայքն Հայոց որ յԵրուսաղէմ եօթանասուն վաճք . և գըրեալ զամենայն և բերեալ 'ի յրփաց գաւառն, որ այժմ՝ կոյի Չմիկածակ . և մեր գրեալ զայս և օրինակեալ զամենայն կարգաւ :

ՅԵՂԱՔԱՆՈՒԹԻՒՆ

Կ Ի Պ Ր Ո Ս Ի Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ա Յ

ԼՈՒՍԻՆԵԱՆ ԱԶԳԱՏՈՂՄԻՆ

(Քաղեալ 'ի Դիոնիսէն վեներաբոս)

(Տես Պր. Գ. Հաս. ԼԹ. էջ 231):

ՀԻՒԿՍՈ ԼՈՒՍԻՆԵԱՆ, իշխան Գալիլիոյ, ատենակալ Հռովմայ և նախանձընդդէմ իւր Պետրոս հօրեղբոր կիպրոսի գահուն համար, որդի կիի Լուսինեան, անդրանիկ եղբայր Պետրոսի Ա, Յակոբայ Ա թագաւորաց և Մարեմայ Պուրպանեան, որուն վրայ հիմայ խօսեցանք, 1358ին Գաղղիա կը

գտնուէր : Այս տարուոյս մէջ գրուած թղթոյ մը մէջ 'ի Գուլուզ՝ կողուած է, աւսպետ, որդի՝ անդրանիկ որդոյ աքքայիկ կիպրոսի : Իր նշանն էր վահան առիժով, միակողմանի շուշանասփիւռ . քահանայապետէն խնդրեց կիպրոսի թագք ընդդէմ իւր Պետրոս Ա հօրեղբոր, և թագաւորը նուիրակ զըր-